

**ՀՈԼՈՎԱԿԱՆ ԶՈՒԳԱԶԵՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԱՐԲԵՐԱԿԱՆ
ՄԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՏԵՍԱԿՆԵՐԸ ԱՐԴԻ ԳՐԱԿԱՆ
ԱՐԵՎԵԼԱՀԱՅԵՐԵՆԻ ԱՆՎԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ**

ՅՈՒՐԻ ԱՎԵՏԻՍՅԱՆ

Լեզվի զարգացման ընթացքում արդի գրական արևելահայերենի հոլովական համակարգում ձևավորվում ու մշակվում են հոլովման ու հոլովային նոր տարբերակներ՝ առաջ բերելով զուգաձևություններ: Դրանց առաջացման հիմնապատճառներն են ի հոլովման գերիշխանության ծավալումը, ավանդաբար փոխանցված հոլովային զուգաձևերի փոխներթափանցումները, հիմքային զուգաձևերի, մասնավորապես անհնչյունափոխի հիմքով կազմությունների զարգացումը, իմաստային և գործառական-ռճական հիմունքով ձևերի զուգահեռ գործածությունը: Այս հիմքով էլ դասակարգվում են հոլովական զուգաձևերի տարատեսակները՝ **1. հոլովման զուգաձևեր՝** ըստ եզակի սեռական-տրականի կազմության զուգաձևեր, որը պայմանավորված է ի հոլովման ընդլայնմամբ (սյան//սյունի, այգու//այգիի, սկեսրոջ//սկեսուրի, ծննդյան//ծննդի), **2. հոլովային զուգաձևեր՝** թեք հոլովների՝ տարբեր վերջավորություններով զուգաձևեր (կղզուց//կղզիից, շարժմամբ//շարժումով, երջանկությամբ//երջանկությունով), **3. հիմքային զուգաձևեր՝** թեք հոլովների՝ նույն վերջավորությամբ, բայց տարբեր հիմքերով զուգաձևեր (մարզիչի/մարզչի, օրից//օրվանից, գրչով//գրիչով, օրով//օրվանով, Լոռիում//Լոռում), **4. իմաստային զուգաձևեր՝** բառի տարբեր իմաստներով պայմանավորված զուգաձևեր (օրի//օրվա, տարու//տարիի, ժամից//ժամվանից, գիշերով//գիշերվանով), **5. ռճական զուգաձևեր՝** ռճական-արտահայտչական տարբեր նշանակություններով զուգաձևեր (սգո//սգի, դստեր//դուստրի, Լոռվա//Լոռու): Դրանք հանգամանորեն քննարկվում և նկարագրվում են հոդվածում:

Հոլովական զուգաձևերի առաջացումը և գործածությունը քերականական անընդհատ գործընթացներ են, որոնք հայերենի ձևաբանության այս բաժինը դարձնում են հայերենի քերականական համակարգի՝ տեղաշարժերով թերևս ամենից ավելի հարուստ շերտը:

Բանալի բառեր - զարգացում, հոլովական զուգաձևություն, հոլովման զուգաձևեր, հոլովային, իմաստային և ռճական զուգաձևեր, հնչյունափոխված և անհնչյունափոխ ձևեր, երկձևայթ

ՄՈՒՏՔ: Լեզվի բնականոն զարգացումը ուղեկցվում է տարբերակային ձևերի առաջացումով: Եվ դա արտահայտվում է լեզվի բոլոր մակարդակներում՝ հնչյունական-արտասանական համակարգից մինչև

շարահյուսական կառույցներ: Հոլովական գուգաձևերը¹ հոլովների տարբերակային ձևեր են, որոնք վերաբերում են բացառապես հոլովի ձևավորմանը՝ հոլովական ձևին, և որպես այդպիսին՝ հոլովական իմաստին առնչվում են այնքանով, որքանով արտահայտում են նույն կամ մոտ քերականական իմաստ(ներ): Այլ կերպ ասած՝ հոլովական գուգաձևերը լրացուցիչ բաշխման հարաբերության մեջ գտնվող ձևեր են կամ ձևաբանական հոմանիշներ:

Լեզվում տարբերակային ձևերի դասակարգման սկզբունքները մեծ չափով թելադրված են այն գործոններով, որոնք պայմանավորել են այդ ձևերի առաջացումը և զարգացումը: Դրանք լեզվի տարբեր մակարդակներում տարբեր են, բայց և երբեմն համընկնում են: Օրինակ՝ **ուղղախոսական-արտասանական** տարբերակների (ձայնեղ բաղաձայնների արտասանություն, շեշտադրություն, հնչյունափոխական իրողություններ ևն) ձևավորումը բացատրվում է առավելապես խոսակցական լեզվի ազդեցությամբ, իսկ **բառային տարբերակների** (անձնանվեր//անձնվեր, շնագայլ//գայլաշուն, հուզարտահայտչական//հուզարտահայտչական, գագաթաժողով//գագաթնաժողով ևն) առաջացումը արգասիք է գերազանցապես լեզվի ներքին օրինաչափությունների (բարեհնչություն, հակիրճություն, համաբանություն, էներգիայի տնտեսում ևն), ինչպես նաև խոսակցական լեզվի ու բարբառների անմիջական ազդեցության, մասամբ՝ նաև ավանդույթի: **Շարահյուսական գուգահեռ կառույցների** ծագման գործում գերիշխող է լեզվի զարգացման ներքին օրինաչափությունների և խոսակցական լեզվի դերը: Մասամբ դերակատարում ունեն նաև օտար ազդեցությունները:

Ձևաբանական գուգաձևությունների առաջացման «դրդապատճառը» նախ և առաջ խոսակցական լեզուն է: Զգալի է նաև լեզվի զարգացման ներքին օրինաչափությունների դերը, այսինքն՝ տեղաշարժի համապատասխանելիությունը լեզվի գործող կանոններին: Որոշ չափով դեր է խաղում նաև լեզվական ավանդույթը:

Հոլովական գուգաձևերի առաջացման պատճառները հիմնականում կապվում են խոսակցական լեզվի ազդեցությամբ կամ համաբանությամբ ի հոլովման ընդլայնման, իմաստային և ձևափոխական հոլովումների փոխներգործության, ավանդական հոլովաձևերի պահպանման և այլ գործոնների հետ:

Հարցին հայ քերականները պարբերաբար անդրադարձել են: Երևույթը կա՛մ քննարկվել է քերականական տարբերակային ձևերի տեսությամբ:

¹ Մովորաբար ամեն մի գոյական պատկանում է հոլովումներից որևէ մեկին: Մակայն կան գոյականներ, որոնք գուգահեռաբար կարող են պատկանել մեկ այլ հոլովման, այսինքն՝ կարող են հոլովվել երկու ձևով (երբեմն նաև երեք), օրինակ՝ *անկյուն – անկյունի // անկյան, կայսր – կայսեր // կայսրի, օր – օրի // օրվա, սկեսուր – սկեսուրի // սկեսրոջ, մահ-մահի // մահու // մահվան* ևն: Այս երևույթը կոչվում է **հոլովական գուգաձևություն**, իսկ տարբերակները՝ **հոլովական գուգաձևեր/գուգաձևություններ**:

յան ընդհանուր տիրույթում², կա՛մ հարցը ներկայացվել է հոլովների ու հոլովումների նկարագրությանը գուգահեռ³, կա՛մ էլ գուգաձևությունները տրվել են ըստ առանձին հոլովների կամ հոլովումների⁴: Բոլոր այս քննարկումներում առավել կամ պակաս չափով անդրադարձ է եղել նաև հոլովական գուգաձևերի առաջացման պատճառական հիմքերին: Ըստ այդմ՝ արվել են նաև որոշակի փորձեր՝ հոլովական գուգաձևությունները դասակարգելու ըստ այդ հիմքերի:

Մ. Աբեղյանը հոլովական գուգաձևերը նկարագրում է հոլովներն առանձին քննարկելիս: Անդրադառնում է հնից փոխանցված տարբերակներին, նաև նոր կազմություններին (հայելու//հայելիի, Անու//Անիի, Գարիբալդու//Գարիբալդիի, ընկերոջ//ընկերի, աներոջ//աների, սկետրոջ//սկետրի, ուսումի//ուսման նն), այդ թվում նաև հնչյունափոխվող և անհնչյունափոխ հիմքով ձևերին (ջուր-ջրրի, թուղթ-թըղթի; հիմք-հիմքի, լուր-լուրի, բջիջ-բջիջի նն)⁵: Սակայն դրանց տարբերական կամ դասակարգման փորձ ըստ էության չի արվում:

Գ. Զահուկյանը հոլովական «տատանվող գուգաձևերի» առաջացման համար նշում է երեք հիմնական գործոն՝ ձևական, իմաստային և պատմական: Վերջին դեպքում նա նկատի ունի «ավանդաբար հաստատված և համաբանությամբ ու միասնականացման տենդենցով պայմանավորված լեզվագործածությունը»⁶:

Հոլովական գուգահեռ ձևերի տարբերակման տեսական հակիրճ հարցադրում է արել **Է. Աղայանը**: Նա առաջարկում է սեռական-տրականի գուգաձևությունները կոչել **հոլովական գուգաձևեր** (ընկերոջ//ընկերի, անկողնու//անկողնի), իսկ մեր ըմբռնմամբ հիմքային տարբերակներով գուգաձևերը անվանում է «միևնույն ենթահոլովաձևի կամ հոլովաձևի **ազատ տարբերակներ**» (լեռից//լեռնից, լեռով//լեռնով, լեռում//լեռնում): Ըստ որում, առաջարկում է չնույնացնել այդ երկուսը, քանի որ ազատ տարբերակները ձևավորվում են ոչ թե տարբեր հոլովիչների, այլ տարբեր հիմքերի գործառությամբ. «ստացվում են ոչ թե միևնույն ձևային կամ ենթաձևային տարբեր ձևակների (*նկատի ունի հնչյունափոխված հիմքերը՝ Յու. Ա.*), այլ տարբեր ենթաձևայինների

² Տե՛ս **Մ. Աբեղյան**, Հայոց լեզվի տեսություն, Եր., 1965, էջ 334-348: **Ս. Աբրահամյան**, Ժամանակակից հայերենի քերականություն, Եր., 1975, էջ 58-71: **Է. Աղայան**, Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը, Եր., 1967, էջ 274-306 նն:

³ Տե՛ս **Գ. Մևակ**, Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց, Եր., 2009, էջ 253-261: **Ս. Աբրահամյան**, **Ն. Պառնասյան**, **Հ. Օհանյան**, Ժամանակակից հայոց լեզու. ձևաբանություն, հ. 2, Եր., 1974, էջ 81-105: **Ա. Մարգարյան**, Հայոց լեզվի քերականություն. ձևաբանություն, Եր., 2004, էջ 142-157:

⁴ Տե՛ս **Մ. Ասատրյան**, Ժամանակակից հայոց լեզու. ձևաբանություն, Եր., 1983, էջ 92-96: **Զ. Աղաջանյան**, Ձևաբանական նորը և խոսքի մշակույթի հարցեր, Եր., 2007, էջ 144-170: **Հ. Ղազարյան**, Հոլովական գուգաձևությունները անվանական համակարգում // ԱրՊՀ տեղեկագիր, Ստեփանակերտ, 2015, № 1, էջ 3-9:

⁵ Տե՛ս **Մ. Աբեղյան**, նշվ. աշխ., էջ 344-348:

⁶ **Գ. Զահուկյան**, Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը, Եր., 1969, էջ 168:

գործառույթյան հետևանքով»⁷: Ցավոք, հեղինակը հանգամանորեն չի քննարկում հիմքային տարբերակներով հոլովական գուգահեռ ձևերը. որպես ազատ տարբերակների օրինակ են ներկայացվում ընդամենը մեկ բառի հոլովաձևեր կամ ենթահոլովաձևեր, այն էլ այնպիսիք, որոնց եզրերից մեկի (լեռ-նից, լեռ-նով, լեռ-նում) գոյությունը և գործածությունը ժամանակակից հայերենում խիստ կասկածելի են. դրանք վաղուց հնացած և գործածությունից դուրս եկած ձևեր են: Եվ լեզվաբանի սուղ բացատրություններից դժվար է ենթադրել՝ արդյո՞ք ազատ տարբերակներ է համարում նաև հոլովական հիմքային մյուս տարատեսակությունները (ասենք՝ **հասկանիշի/հասկանշի, մարզիչի/մարզչի, օրով/օրվանով, ընկերով/ընկերոջով**): Եթե խոսքը, այսպես կոչված, հիմքային գուգաձևությունների մասին է, ապա այլ հեղինակներ (Ս. Աբրահամյան, Ա. Մարգարյան, Զ. Աղաջանյան և այլք) դրանք նկարագրում են ընդհանուր հոլովական գուգաձևությունների համակարգում:

Է. Աղայանը առանձնացնում է նաև գուգաձևերի այլ խմբեր՝ **գուգաձևեր ըստ կառուցվածքի** (բառի ձևով և տարբեր իմաստներով պայմանավորված գուգաձևեր (տարու//տարվա, ճաշի//ճաշվա նն), **գուգաձևեր ըստ ոճերի** կամ **ոճական գուգաձևեր** (կայսրի//կայսեր, ընկերի//ընկերոջ, քրոջ//քվոր նն)⁸:

Մ. Ասատրյանը ժամանակակից հայերենում գուգաձևությունների առկայությունը բացատրում է երեք գործոններով՝ **1. ի** հոլովման գերիշխող դիրքով՝ մյուս հոլովումների մի զգալի մասին փոխարինելու նրա կարողությամբ, **2. ձևային**, իմաստային և ձևաիմաստային հոլովումների փոխներգործություններով, **3. գրաբարյան** գուգահեռ հոլովական ձևերի (պատմական հոլովումների) առկայությամբ: Դրանցից հիմնականը համարում է առաջինը՝ **ի** հոլովման գերիշխող դիրքը⁹: Լեզվաբանի այս շատ արժեքավոր բացատրություններում, սակայն, խոսքը ավելի շատ գուգաձևերի առաջացման գործոնների մասին է, քան դրանցով պայմանավորված գուգաձևերի հնարավոր տեսակների կամ տարատեսակությունների: Բացի այդ, լեզվաբանը հետագա շարադրանքում հոլովական գուգաձևերը ներկայացնում է ոչ թե իր կատարած բաշխումով, այսինքն՝ ըստ վերը նշված գործոնների, այլ հնարավոր գուգաձևերը պարզապես թվարկում է հոլովումները առանձին ներկայացնելիս:

Սկզբունքորեն ընդունելով այս վերլուծությունների և բացատրությունների գիտական կարևորությունը՝ մենք փորձել ենք առավել համակողմանի և ամբողջական ներկայացնել գրական արևելահայերենի անվանական հոլովման համակարգում հոլովական գուգաձևությունների արտահայտության, այսպես կոչված, **խմբերը կամ տեսակները**՝ ելնելով դրանց առաջացման և զարգացման գործոններից¹⁰: Մեր այս դասա-

⁷ Է. Աղայան, նշվ. աշխ., էջ 276-277:

⁸ Տե՛ս նույն տեղը, էջ 277-278:

⁹ Տե՛ս Մ. Ասատրյան, նշվ. աշխ., էջ 92:

¹⁰ Չենք անդրադարձել այլևայլ ձեռնարկներում, մենագրություններում և ուսումնա-

կարգումը, կարծում ենք, ներառում է հոլովական գուգաձևությունների բոլոր դրսևորումները և որոշակիորեն մատնանշում է դրանց զարգացման միտումները:

Չխախտելու համար լայն գործածություն ունեցող տերմինները չփոփոխելու ավանդույթը՝ մենք պահպանել ենք **հոլովական գուգաձևություն** տերմինը՝ դրանում ներառելով գուգաձևերի հինգ խումբ կամ տեսակ՝ **1. հոլովման գուգաձևեր**՝ ըստ եզակի սեռական-տրականի կազմության գուգաձևեր, որը պայմանավորված է ի հոլովման ընդլայնմամբ (սյան//սյունի, այգու//այգիի, տալոջ//տալի, սկեսարոջ//սկեսարի, ծննդյան//ծննդի, ծնկան//ծնկի), **2. հոլովային գուգաձևեր**՝ թեք հոլովների՝ տարբեր վերջավորություններով գուգաձևեր (այգուց//այգիից, կղզուց//կղզիից, անկողնուց//անկողնից, շարժմամբ//շարժումով, երջանկությամբ//երջանկությունով), **3. հիմքային գուգաձևեր**՝ թեք հոլովների՝ նույն վերջավորությամբ, բայց տարբեր հիմքերով գուգաձևեր (մարզիչի/մարզչի, օրից//օրվանից, գրչով//գրիչով, օրով//օրվանով, Լոռիում//Լոռում). այս տեսակի մեջ պայմանականորեն ներառել ենք ազատ տարբերակներ համարվող ձևերը, **4. իմաստային գուգաձևեր**՝ բառի տարբեր իմաստներով պայմանավորված գուգաձևեր (օրի//օրվա, տարու//տարիի, ժամից//ժամվանից, ժամանակից//ժամանակվանից, ճաշի//ճաշվա, գիշերով//գիշերվանով), **5. ոճական գուգաձևեր**՝ ոճական-արտահայտչական տարբեր նշանակություններով գուգաձևեր (սգո//սգի, դստեր//դուստրի, հրո//հրի, անձանց //անձերի, Լոռվա//Լոռու, Շուշվա//Շուշիի):

ՀՈԼՈՎՄԱՆ ԶՈՒԳԱԶԵՎԵՐ: Հայտնի է, որ ի-ն ընդհանրական հոլովում է. ժամանակակից հայերենում այս հոլովմամբ են հոլովվում գոյականների մեծագույն մասը, փոխանուն գոյականները և այլ հոլովման ենթարկվող գոյականների մի մասը: Ի հոլովումի գերիշխանության ծավալման՝ որպես հոլովական գուգաձևությունների առաջացման հիմնական պատճառի հիմքում ընկած է վերջին գործոնը, այն է՝ **այլ հոլովման ենթարկվող գոյականների մի մասը գուգահեռաբար հոլովվում է նաև ի հոլովմամբ**. գնալով ավելի ու ավելի է ընդլայնվում ի հոլովումի քերականական դաշտը՝ հոլովական ձևերի մեջ առաջ բերելով նորանոր գուգահեռ կազմություններ: Սրա դրսևորման հիմնական ոլորտը եզակի սեռական-տրականն է, այլ կերպ ասած՝ մենք գործ ունենք **հոլովման գուգաձևեր** ենթատեսակի հետ: Ըստ որում, դա հավասարապես չի դրսևորվում բոլոր հոլովումների պարագայում: Առավել ակտիվ է **ու>ի**

սիրություններում որպես գուգաձևեր նշվող քերականական այն կազմություններին, որոնք արդի գրական արևելահայերենում անգործածական են, ներբարբառային են կամ խստորեն հնացած (*աներ-անոր/աների, անորից, տեգր-տագրոց, սկեսուր-սկեսոր//կեսոր, լեռ-լեռնի, ընկեր-ընկերի, անկողին-անկողնի, ամուսին-ամուսնի, Մոչի-Մոչու, Գորի-Գորու, Անի-Անու, հոգնակի-հոգնակու, Շուշի-Շուշում, մուկ-մկնով, գարունք-գարունքվա, աշունք-աշունքվա, տատի-տատու, եղեռն-եղեռնու, երեխա-երեխու, շուրթ-շրթան, դուռ-դռի, կոշիկ-կոշկի, ճիչ-ճչի, լինգ-լնգի, երեկո-երեկոյվա* նն), բացի այն դեպքերից, երբ անհրաժեշտ է եղել դրանց գործառական-ոճական ինչ-ինչ տարբերություններ նշելը:

փոխանցումը. **ու** հոլովման ենթարկվող գոյականների մեծ մասը սեռական-տրականը կազմում է նաև **ի** վերջավորությամբ, ինչպես՝ *Գյումրի-Գյումրու//Գյումրիի, Լոռի-Լոռու//Լոռիի, Մեղրի-Մեղրու//Մեղրիի, Էրեբունի-Էրեբունու//Էրեբունիի; Աղասի-Աղասու//Աղասիի; հայելի-հայելու//հայելիի, բանալի-բանալու//բանալիի, ապակի-ապակու//ապակիի, մատանի-մատանու//մատանիի, կանաչի-կանաչու//կանաչիի, նարդի-նարդու//նարդիի, ոսկի-ոսկու//ոսկիի, խինկալի-խինկալու//խինկալիի:*

Մի շարք դեպքերում նկատելիորեն ակտիվանում են **ի**-ով կազմությունները (*այլալի-այլալիի, ածելի-ածելիի, այրի-այրիի, ապառնի-ապառնիի, հոգնակի-հոգնակիի, պատվելի-պատվելիի, սոնի-սոնիի, ունելի-ունելիի* ևն), թեև դրանց մի մասի համար գործածական են եղել **ու**-ով ձևերը:

Նույնիսկ կարելի է պնդել, որ արդի գրական արևելահայերենում **ի** վերջամասնիկ ունեցող օտար և հայերեն հասուկ գոյականների մեծ մասի համար առավել սովորական է **ի**-ով տարբերակը: Այսպես՝ *Արածանի-Արածանիի//Արածանու, Արենի-Արենիի//Արենու, Արգնի-Արգնիի //Արգնու, Արտենի-Արտենիի//Արտենու, Բերկրի-Բերկրիի//Բերկրու, Բջնի-Բջնիի//Բջնու, Նոր Գեղի-Նոր Գեղիի//Նոր Գեղու, Շուշի-Շուշիի// Շուշու, Պտղնի-Պտղնիի//Պտղնու, Փարպի-Փարպիի//Փարպու, Գորի-Գորիի//Գորու, Ագապի-Ագապիի//Ագապու, Պագանի-Պագանիի//Պագանիու, Ջելենակի-Ջելենակիի//Ջելենակու, Նավալնի-Նավալնիի//Նավալնու, Քառնեգի-Քառնեգիի/Քառնեգու¹¹:*

Որոշ ակտիվություն են հանդես բերում նաև **ան>ի, ոջ>ի, յան>ի, ա>ի** փոխանցումները: Այսպես.

ԱՆ>//Ի — *ծունկ-ծնկան//ծնկի, բուռ-բռան//բռի, նուռ-նռան//նուռի, ձուկ-ձկան//ձկի, ծոռ-ծոռան//ծոռի, հարցում-հարցման//հարցումի, մերձեցում-մերձեցման//մերձեցումի,*

ՅԱՆ>//Ի — *կորուստ-կորստյան//կորստի, փախուստ-փախստյան//փախուստի, գալուստ-գալստյան//գալստի, հանգիստ-հանգստյան//հանգստի,*

Ա>//Ի — *սյուն-սյան//սյունի, ձյուն-ձյան//ձյունի, արյուն-արյան//արյունի, անուն-անվան//անունի, անկյուն-անկյան//անկյունի,*

ՈՋ>//Ի — *բուժքույր-բուժքրոջ//բուժքույրի, տանուտեր-տանուտիրոջ//տանուտերի, տալ-տալոջ//տալի, սկեսուր-սկեսարոջ//սկեսուրի, տեգր-տեգրոջ//տեգրի:*

Հոլովման առանձին զուգաձևերի հիմքը գրական լեզվի ավանդույթն է (աստծո/աստծո, ձմռան/ձմեռվա, ամռան/ամառվա) կամ խոսակցական ու բարբառային ձևերի փոխներգործությունը (սկեսարոջ//սկեսոր/կեսոր, աներոջ//անոր, մահվան/մահու):

¹¹ Որոշ անձնանուններ, որոնք տևական ժամանակ հայերենում գործածական են, արդի արևելահայերենում առավելապես գործադրվում են **ու** հոլովմամբ: Օրինակ՝ ըստ **ԱՐԵՎԱԿԻ** տվյալների **Գորկի** անձնանվան **Գորկիի** ձևը 18 տեքստում (հիմնականում արևմտահայերեն) ունի 88 գործածություն, **Գորկու** ձևը՝ 499/1786: Կամ՝ **Ֆիրդուսի-Ֆիրդուսու**՝ 66/145, **Ֆիրդուսիի**՝ 13/14, **Նիզամի-Նիզամու**՝ 23/43, **Նիզամիի**՝ 17/27:

ՀՈՒՆՎԱԿԱՆ ԶՈՒԳԱԶԵՎԵՐ: Հոլովական զուգահեռ վերջավորությունների գոյությամբ պայմանավորված՝ հոլովային զուգածներ ունեն սեռական-տրականը, բացառականը և գործիականը: Ներգոյականը ունի արտահայտության միայն մեկ ձև՝ մեկ վերջավորություն՝ **-ում**, հետևաբար չունի զուգածությունների այս տեսակը: Ինչ վերաբերում է սեռական-տրականի հոլովային տարբերակներին, ապա դրանք, ըստ էության, նաև **հոլովման զուգածներ** են (որքանով որ հայերենի անվանական հոլովման համակարգում հոլովումը որոշվում է եզակի սեռական-տրականի կազմությամբ) և որպես այդպիսիք՝ վերը դիտարկվեցին:

Բացառական հոլովը, հայտնի է, ժամանակակից հայերենում կազմվում է **-ից** և **-ուց** վերջավորություններով: Առավել կենսունակ է առաջինը, քանի որ երկրորդ վերջավորություն են ստանում սահմանափակ թվով գոյականներ. ընդհանուր առմամբ **-ուց**-ով բացառական են կազմում **ու** հոլովման պատկանող գոյականները (այգի-այգու-այգուց, կղզի-կղզու-կղզուց, որդի-որդու-որդուց, ամուսին-ամուսնու-ամուսնուց, մարդ-մարդու-մարդուց, աստված-աստծու-աստծուց են), որոնք մեծ մասամբ **ի**-ով վերջավորվող գոյականներ են: Այս գոյականների բացառականում գնալով ակնհայտորեն ակտիվանում է **-ից** հոլովակերտը, որը ավելանում է բառի ուղիղ ձևին, և արդյունքում ունենում ենք հոլովական զուգածներ՝ առավել կամ պակաս գործածականությամբ, ինչպես *ուղի-ուղուց/ուղիից, ապակի-ապակուց/ապակիից, կղզի-կղզուց/կղզիից, գինի-գինուց/գինիից, Վեդու-Վեդուց/Վեդիից, Լոռի-Լոռուց/Լոռիից, Գյումրի-Գյումրուց/Գյումրիից, Քենեղի-Քենեղուց/Քենեղիից* են: Գործածական որոշակի հաճախականություն ունի նաև **անկողին** բառի բացառականի (անկողնուց) զուգահեռ տարբերակը՝ **անկողնից** (ըստ ԱՐԵՎԱԿ-ի տվյալների՝ 322 համատեքստ, 151 տեքստ), օրինակ՝ «Վերջապես բժիշկը թույլ տվեց վեր կենալ **անկողնից**», «Նա **անկողնից** այլևս վեր չէր կենալու», «**Անկողնից** վերցրեց վերմակն ու գցեց իր վրա» են: Նույնը չենք կարող ասել **ամուսին** բառի **ամուսնից** տարբերակի մասին. այն գրեթե դուրս է եկել գործածությունից՝ որպես խոսակցական-բարբառային ձև:

Գործիական հոլովը, հայտնի է, կազմվում է **-ով** և **-բ** վերջավորություններով: Առավել կենսունակ է առաջինը: **-Բ** վերջավորություն են ստանում սահմանափակ թվով գոյականներ. դրանք են՝ ա) **-ություն** ածանց ունեցող գոյականները՝ **հանդիսություն-հանդիսությամբ, ազգություն-ազգությամբ, հիասթափություն-հիասթափությամբ** են, բ) **-ում** ածանց ունեցող գոյականների գերակշիռ մասը՝ **զարգացում-զարգացմամբ, ձերբակալում-ձերբակալմամբ** են (բայց **սպասում-ով, հանդիպում-ով, դիմում-ով** են), գ) **արյուն, անկյուն, անուն** գոյականները՝ **արյուն-արյան-արյամբ, անկյուն-անկյան-անկյամբ, անուն-անվան-անվամբ**:

Նշված գոյականները սովորաբար ունենում են նաև **-ով** վերջավորությամբ գուգաձևեր՝ ուղղականի հիմքով կազմված՝ *հանդիսություն-հանդիսությամբ//հանդիսությունով, ազգություն-ազգությամբ//ազգությու-նով, զարգացում-զարգացմամբ//զարգացումով, ձերբակալում-ձերբակալումով//ձերբակալմամբ, ցասում-ցասմամբ//ցասումով, գրանցում-գրանցմամբ//գրանցումով, հիացում-հիացմամբ//հիացումով, արյուն-արյամբ//արյունով, անկյուն-անկյամբ//անկյունով, անուն-անվամբ//անունով* ևն: Դրանք դրսևորում են գործառական առավել կամ պակաս ակտիվություն: Այդ մասին կխոսվի իր տեղում:

Հոլովային գուգաձևերի առաջացման, այսպես կոչված, հիմունքը բացառական և գործիական հոլովների կազմության մեջ ուղղականի հիմքով ձևերի (կղզի-կղզի+ից, շարժում-շարժում+ով, ազգություն-ազգություն+ով) զարգացումն է: Այդ երևույթը (հիմքակազմության մեջ ուղիղ ձևերի պահպանումը) արդի հայերենի ձևակազմության մեջ գործող օրինաչափությունների դրսևորումներից է:

ՀԻՄՔԱՅԻՆ ՉՈՒԳԱԶԵՎԵՐ: Սրանք կազմվում են հիմքային երկու տարբերակների գուգաբանությամբ. **ա) հնչյունափոխված և անհնչյունափոխ** հիմքեր¹², **բ) միաձևույթ և երկձևույթ** հիմքեր¹³:

ա) Հնչյունափոխված և անհնչյունափոխ հիմքեր: Արդի հայերենի և առհասարակ լեզուների բառակազմության և ձևակազմության մեջ միտում կա անհնչյունափոխ հիմքերի զարգացման ու ծավալման¹⁴: Հնչյունափոխված հիմքային տարբերակում սովորաբար հնչյունափոխվում է հիմքի ներփակ ձայնավորը: Հիմքային այս գուգաձևությունները բնորոշ են ինչպես սեռական-տրականին, այնպես էլ մյուս թեք հոլովներին¹⁵: Որպես կանոն, սեռական-տրականում միևնույն գոյականի հնչյունափոխվող հիմքը պահպանվում է նաև մյուս թեք հոլովներում:

¹² Բուն իմաստով, իհարկե, սրանք դժվար է համարել հոլովական գուգաձևեր, քանի որ ձևավորվում են ոչ հոլովակազմիչ միջոցներով, այսինքն ոչ ձևաբանական փոփոխություններով. փոփոխվում է հիմքը, սակայն համակարգային նկարագրության ու նաև ուսուցման մեթոդաբանական առումներով, կարծում ենք, այս տեսակի առանձնացումը կարող է ընդունելի տարբերակ համարվել, այնպես, ինչպես հիմքային գուգաձևությամբ հոլովական մյուս տարբերակների դեպքում է *օրից/օրվանից, մեզնից/մեզանից, ձեզնով/ձեզանով* ևն:

¹³ Այս տերմինները (միաձևույթ և երկձևույթ) գործածված են պայմանականորեն՝ ձևերի տարբերակայնությունը նշելու համար, քանի որ գուտ ձևույթաբանական տեսանկյունից միաձևույթ կոչված հիմքը եզակի դեպքերում կարող է լինել նաև երկձևույթ, ինչպես բերված օրինակում է **ամռանից-ամռան-ից, ամառվանից-ամառվան-ից**:

¹⁴ Տե՛ս **Յու. Ավետիսյան**, Տեղաշարժեր ժամանակակից արևելահայերենի հնչյունափոխված և անհնչյունափոխ բառակազմական և ձևակազմական հիմքերում // «Հայագիտության գուգահեռականներում», Եր., 2021, էջ 125-160: **Ս. Ավետյան**, Անվանական հոլովման տիպաբանական զարգացումը հայերենում // «Հայագիտության հարցեր», Եր., 2021, № 1, էջ 223-236:

¹⁵ Անդրադառնալով հոլովման ժամանակ ներփակ ձայնավորների հնչյունափոխությանը՝ Ս. Աբեղյանը նույնպես արձանագրել է անհնչյունափոխ հիմքով կազմությունների զարգացումը հայերենում: «Ձայնափոխություն» խորագրի տակ նա գրում է. «Այնպես որ հետզհետե պակասում է **ՈԲ, Ի** ձայնավորի սղումը հոլովման ժամանակ» (**Ս. Աբեղյան**, նշվ. աշխ., էջ 348):

Այսպես.

սեռական-տրական` *մարզչի//մարզիչի, գրչի//գրիչի, մանկան//մանուկի, բվի//բուի, սգի//սուգի, սնկի//սունկի, ծնկի//ծունկի, ձկի//ձուկի, Մարգսի//Մարգիսի,*

բացառական` *մարզչից//մարզիչից, գրչից//գրիչից, բուից//բվից, սնկից//սունկից, ծնկից//ծունկից, ձկից//ձուկից, Մարգսից//Մարգիսից,*

գործիական` *մարզչով//մարզիչով, գրչով//գրիչով, բվով//բուով, Մարգսով//Մարգիսով,*

ներգոյական` *գրչում//գրիչում, բջջում//բջիջում, եզրափակչում//եզրափակիչում, խորհրդում//խորհուրդում, ծաղկում//ծաղիկում* ևն:

Այս խմբի գուգաձևությունների հետաքրքիր դրսևորումներից են գործիական և ներգոյական հոլովների կազմության մեջ **ի**-ով վերջավորվող և **ու/ի** խառը հոլովման պատկանող գոյականների հիմքային տարբերակներով ձևերը¹⁶: Եթե բացառականի դեպքում գուգաձևությունը պայմանավորված է նաև հոլովակազմիչ վերջավորությամբ (ապակի-ապակ-**ուց**/ապակի-**ից**, այգի-այգ-**ուց**/այգի-**ից**), ապա գործիականի և ներգոյականի պարագայում միակ գործոնը հիմքային հնչյունափոխված և անհնչյունափոխ տարբերակներն են, ինչպես` *այգով//այգիով, ապակով//ապակիով, կղզով//կղզիով, գինով//գինիով, փռչով//փռչիով, Լոռով//Լոռիով, Էրեբունով//Էրեբունիով; այգում//այգիում, ապակում//ապակիում, կղզում//կղզիում, գինում//գինիում, փռչում//փռչիում, Լոռում//Լոռիում, Էրեբունում//Էրեբունիում* ևն¹⁷:

բ) Միաձևույթ և երկձևույթ հիմքեր: Հիմքային գուգաձևությունների տարատեսակության աղբյուր են բացառական, մասամբ նաև գործիական հոլովների կազմության մեջ միաձևույթ և երկձևույթ հիմքերը, որոնք ձևավորվում են ուղղական և սեռական-տրական հոլովներից, այսինքն` հենց այդ հոլովաձևերը ծառայում են որպես գուգաձևության հիմք: Մա բնորոշ է հիմնականում ժամանակ ցույց տվող գոյականներին, ինչպես` *ամսից//ամսվանից, ժամանակից//ժամանակվանից, առավոտից//առավոտվանից, կեսօրից//կեսօրվանից, օրից//օրվանից, գիշերից//գիշերվանից, շաբաթից//շաբաթվանից, ժամից//ժամվանից; ա-*

¹⁶ Խոսքը առավելապես հոլովակազմիչ նույն վերջավորությամբ բաղադրվող հիմքային տարբերակների մասին է: Ընդունված չէ հերթագայությունը (**ու/ի, ա/ն, ք/ց** ևն) բուն իմաստով հնչյունափոխություն համարել, քանի որ քերականական փոփոխություն է, և դրանցով բաղադրված հիմքերը (ուղի-ուղու+ց//ուղի+ից, ուղ+ով//ուղի+ով, ապակի-ապակ+ով//ապակի+ով) միայն պայմանականորեն կարող են համարվել հնչյունափոխական տարբերակներ, թեև հայտնի է նաև, որ բառարանային սահմանումով, ի վերջո, լայն առումով այս դեպքում նույնպես գործ ունենք հնչյունափոխության հետ (տե՛ս **Չ. Պետրոսյան**, Հայերենագիտական բառարան, Եր., 1987):

¹⁷ Առանձին բառերի դեպքում, պայմանավորված հիմք բառի բազմիմաստությամբ, առաջ են գալիս իմաստային տարբերություններ: Օրինակ իմաստային որոշակի տարբերություն կա *գինիով և գինով* գուգաձևերի միջև. երկրորդը կարող է ընկալվել նաև «գինոված» իմաստով: Կամ` *խորհրդից և խորհուրդից, խորհրդով և խորհուրդով, խորհրդում և խորհուրդում* գուգաձևերից երկրորդներում ավելի է շեշտվում «կարգադրիչ կամ խորհրդակցական մարմին» իմաստը:

առավոտով//առավոտվանով, կեսօրով//կեսօրվանով, օրով//օրվանով, գիշերով//գիշերվանով, շաբաթով//շաբաթվանով: Տարբերակների միջև կան իմաստային և գործառական որոշակի տարբերություններ. մի քանիսը փոխանուն գործածություններ են: Դրանք կքննարկենք հոլովական գուգաձևությունների առաջացման իմաստային և գործառական պատճառները դիտարկելիս:

Հիմքային գուգաձևեր ունեն նաև այլ հոլովումների պատկանող որոշ գոյականներ, ինչպես՝ *ամռանից//ամառվանից, ձմռանից//ձմեռվանից, աներից//աներոջից, տալից//տալոջից; աշունով//աշնանով, գարնանով//գարնանով, ընկերով//ընկերոջով, աներով//աներոջով, ամուսինով//ամուսնով, անկողինով//անկողնով* ևն:

Դրանք առավելապես ավանդություն փոխանցված կազմություններ են, որոնք մասամբ տարբերվում են նաև իրենց գործառական-ոճական նրբերանգներով:

ԻՄԱՍՏԱՅԻՆ ԶՈՒԳԱԶԵՎԵՐ: Հոլովական գուգաձևությունների առաջացման կամ, ավելի ստույգ, դրանց գործառման կարևոր պատճառներից մեկը հոլովական տարբերակների միջև եղած իմաստային տարբերություններն են, որոնք պայմանավորված են բառիմաստով և առաջ են բերում **իմաստային հիմքով գուգաձևեր**: Ժամանակի ընթացքում տարբերակներից մեկը ձեռք է բերում նոր նրբիմաստ(ներ) և հատուկ գործածության մեջ դառնում է մյուս տարբերակով չփոխարինվող: Սա իհարկե հատուկ է հոլովաձևերի որոշակի խմբերի:

Իմաստային և գործառական հիմունքով որոշակի զանազանություն ունեն, օրինակ, ժամանակ ցույց տվող գոյականների մի մասի սեռական-տրականի ձևերը (տարու//տարվա, ժամի//ժամվա, առավոտի//առավոտվա, օրի//օրվա): Այսինքն՝ լեզվում դրանք պահպանվում են որպես տարբերակային ձևեր այն պարզ պատճառով, որ ունեն իմաստային տարբերություններ: Այսպես, օրինակ՝ նշված բառերը սեռական-տրականում ստանում են **վա**, եթե հանդես են գալիս որպես ժամանականիշ բառեր. այլ նշանակությամբ դրանք սովորաբար ենթարկվում են **ի** հոլովման, ինչպես՝ «Մեկ **օրվա** ընթացքում լուրջ փոփոխություններ կատարվեցին», «Այդ **օրվա** տպավորության տակ եմ» և «Մի տնից չենք, մի **օրի** ենք», «Այս **ի** նշ **օրի** եք հասել». առաջին երկու նախադասություններում **օր**-ը իր բուն՝ ժամանականիշ իմաստով է գործածված, իսկ մյուս երկուսում նշանակում է վիճակ, դրություն: Այլ օրինակներ՝ «Աշխատանքն ավարտեցինք մի քանի **ժամվա** ընթացքում» և «Այս **ժամին** **ի** նշ եք անում այստեղ», «Խոսում էին հին **ժամանակվա** բաներից», «Դա տեղի ունեցավ ճիշտ **ժամանակին**», «Պապիիս **տարուն** շատերն էին եկել գյուղ», «Այդ վայրերում **տարվա** մեծ մասը ձյուն է»: **Առավոտ** բառի սեռական-տրականի **ի**-ով տարբերակը առավելապես որոշային նշանակություն ունի, ինչպես՝ «լույս առավոտի»:

Վա հոլովման պատկանող ոչ բոլոր բառերի հոլովական տարբերակներն են միշտ հանդես բերում իմաստային զանազանություն: Օրինակ՝ երբեմն ժամանակի իմաստ են արտահայտում **ամիս**, **ժամանակ** և **ժամ** բառերի նաև **ի**-ով ձևերը, ինչպես՝ «Երկու **ամսվա** ընթացքում մեկ անգամ ենք հանդիպել», «**Ամսի 20**-ին հանդիպելու ենք», «**Ժամանակին** այդպես չէին վարվում», «Դրանք Բագրատունիների **ժամանակվա** շինություններ են»: Այսինքն՝ զուգաձևությունների տարբերությունը այս դեպքում զուտ կապակցական է, ինչպես, օրինակ, նաև մի քանի այլ բառերի պարագայում՝ *հանուն սիրո* և *հավատում եմ քո սիրուն* (այս ձևը գրեթե առանց բացատրության հանդես է գալիս բայական խնդրանությամբ՝ որոշյալ առումով), *կեսօրին կհանդիպենք* և *կեսօրվա հանգստից հետո*, *մահու չափ*, *մահվան օրը* և *տո մահի տարած* են:

Նույն բառերի՝ բացառականի ու գործիականի զուգաձևերը (օրից //օրվանից, ամսից//ամսվանից, շաբաթից//շաբաթվանից, կեսօրից//կեսօրվանից, ժամանակից//ժամանակվանից, գիշերով//գիշերվանով, օրով//օրվանով, ցերեկով//ցերեկվանով) նույնպես ունեն իմաստային հետաքրքիր դրսևորումներ: «Երբ բառը գործածվում է ժամանակի պարագայի իմաստով և պատասխանում է **ե՞րբ**, **երբվանի՞ց** հարցերին, բացառականը սովորաբար կազմվում է տրականի հիմքով: Այս դեպքում սովյալ գոյականը կա՛մ որոշիչ չի ունենում, կա՛մ ունենում է ժամանակի հերթականություն արտահայտող որոշիչներ (անցյալ, նախորդ, այս, այն, հաջորդ և այլն): Իսկ երբ ժամանակի անունը կիրառվում է սոսկ որպես ժամանակի միավոր և ունենում է թվականով կամ չափ ցույց սովող այլ բառերով արտահայտված որոշիչներ, բացառականը կազմվում է ուղղականի հիմքով: Օրինակ՝ *Անցյալ օրվանից լավ է զգում*: Բայց՝ *Երեք օրից հետո լավ կզգա*: *Նախորդ տարվանից ոչ մի լուր չունեն*: Բայց՝ *Երկու տարուց ավելի է, ինչ ոչ մի լուր չունեն*»¹⁸:

Բացառական հոլովի երկձևությո՝ կազմությունները (վաղվանից, տարվանից, այսօրվանից ևն) միաժամանակ փոխանուն սեռական-տրականի (փոխանուն հատկացուցիչի) հոլովաձևեր են, օրինակ՝ «Ազգագրական երգի փառատունը կսկսվի **այսօրվանից**» (ոչ փոխանուն), բայց՝ «Երեկվա ներկայացումը **այսօրվանից** ավելի հետաքրքիր էր» (փոխանուն): Երկձևությո՝ հիմքով գործիականները (ցերեկվանով, գիշերվանով, առավոտվանով, երեկվանով, կեսօրվանով ևն) ընդունված է համարել փոխանուններ, քանի որ դրանք ժամանակ ցույց չեն տալիս, նշանակում են «գիշերվա, ցերեկվա ևն ինչ-որ բանով» և պատասխանում են ոչ թե **ե՞րբ**, այլ **ինչո՞վ** հարցին¹⁹: Օրինակ՝ «Գնացքով եմ մեկնելու քաղաք. **առավոտվանով** կգնամ, **ցերեկվանով** կամ **գիշերվանով** կվերադառնամ»: Միայն փոխանվանական կիրառություն ունեն նաև այդ կարգի բառերի եզակի ներգոյականի և հոգնակիի՝ **վա** հոլովմամբ ձևե-

¹⁸ Ս. Աբրահամյան, Ն. Պատնասյան, Հ. Օհանյան, նշվ. աշխ., էջ 96:

¹⁹ Տե՛ս նույն տեղը, էջ 96-97:

րը, օրինակ՝ «Եկող տարվա ծրագիրն ավելի հարուստ է, քան այս տարվանը. եկող տարվանում հետաքրքիր նախագծեր շատ կան, այս տարվանում՝ ոչ, ուրեմն ասպարեզ կմտնենք եկող տարում»²⁰:

Շաբաթ բառը ժամանականիշ այն բառերից է, որի սեռական-տրականի և բացառականի տարբերակները կարող են միաժամանակ արտահայտել նաև ժամանակի իմաստ, ինչպես՝ «Մեկ **շաբաթից** կվերադառնամ», «Այս **շաբաթվանից** սկսած՝ գործի ենք», «**Շաբաթվա** ո՞ր օրն էս ազատ» (յոթնօրյա ժամանակի իմաստով են), բայց՝ «Հինգշաբթի հարմար չէ, իսկ ուրբաթի և **շաբաթի** մասին կխոսենք», «Ուրբաթը **շաբաթից** ուշ եկավ» (շաբաթ օրվա իմաստով են): Հայտնի է նաև, որ **շաբաթ**-ը որպես օրերից մեկի անուն, ինչպես շաբաթվա մյուս օրերի անունները (երկուշաբթի, չորեքշաբթի ևն)՝ գործիական և ներգոյական չունի, բայց որպես յոթնօրյա ժամանակի միավոր՝ ունի, ինչպես «Մեկնեցի երկու **շաբաթով**», «Մեկ **շաբաթում** չես հասցնի գործն ավարտել»:

Առաջ բառը ունի **վա** և **ի** հոլովիչով սեռական-տրականի տարբերակներ (առաջվա//առաջի) և դրանցից կազմված բացառականի ու գործիականի զուգաձևեր (առաջից//առաջվանից, առաջով//առաջվանով). **վա**-ով ձևերը ժամանականիշ են, իսկ **ի**-ով ձևերը տարածական իմաստ են արտահայտում: Համեմատաբար գործածական են **առաջվա** և **առաջվանից** հոլովաձևերը (մեկ ժամ **առաջվա** խոսքերը, **առաջվա** նման, **առաջվանից** տարբեր):

Իմաստային հիմունքով են զուգաձևեր կազմում նաև այլ հոլովումների պատկանող մի շարք բառեր՝ «Հիվանդանոցում այդ **քույրին** բոլորը ճանաչում են» / «Հատուկ սեր ուներ իր ավագ **քրոջ** նկատմամբ», «Փողոցը կոչեցին Ազնավուրի **անունով**//**անվամբ**» / «Ես շատ հայտնի **անունով** մարդ է», «Քանի՞ **անգամից** կարող ես այս քարերը տեղափոխել» / «Մի **անգամվա** համար չարժե այդքան գումար ծախսել», «Քանի՞ **ընկերով** եք գնալու» / «Հպարտանում եր իր **ընկերոջով**»²¹:

ՈՃԱԿԱՆ ԶՈՒԳԱՉԵՎԵՐ: Իհարկե, գործառական կամ ոճական զանազանություններ ունեն գրեթե բոլոր հոլովական զուգաձևերը, քանի որ դրանց եզրերը ունեն ոճական տարբեր երանգավորումներ. մեկը

²⁰ Խոսակցական լեզվում երբեմն հանդիպում են նաև սեռականի կրկնակի վերջավորությամբ փոխանվանական ձևեր՝ *այսօրվանինից, երեկվանինից, այսօրվանինով, երեկվանինով*. «Ո՞նց անենք, որ այսօրվա օրը **երեկվանինից** լավ լինի», «Ընտիր ապրանք ա. անցյալ **տարվանինից** շատ ավելի լավն ա»:

²¹ Իմաստային հիմունքով զուգաձևության յուրօրինակ դրսևորում կարելի է համարել նույն անվան հատուկ և հասարակ տեսակների հոլովական ձևերը: Հայտնի է, օրինակ, որ **Գարուն, Գալուստ, Մանուկ, Ոսկի** հատուկ անձնանունները, հատկանվան իմաստային յուրահատկությամբ պայմանավորված, ենթարկվում են միմիայն **ի** հոլովման, ըստ որում, անհնչունափոխ հիմքակազմությամբ (Գարուն-Գարունի, Գալուստ-Գալուստի, Մանուկ-Մանուկի, Ոսկի-Ոսկիի), իսկ դրանց՝ համանուն հանդիսացող հասարակ անուն տեսակները պատկանում են այլևայլ հոլովումների՝ ըստ անհրաժեշտության ենթարկվելով հնչյունափոխության (գարուն-գարնան, գալուստ-գալստյան//գալուստի/գալստի, մանուկի-մանկան, ոսկի-ոսկու):

սովորաբար առավել գրական է, մյուսը՝ առավել խոսակցական (անկյունի/անկյան, բանալի/բանալու, թոռան/թոռի, հայելի/հայելու, կամրջի/կամուրջի, սկետուրից/սկետորոջից, Լոռուց/Լոռիից նն), մեկը հնաբանություն է, մյուսը՝ համեմատաբար նոր կազմություն (դստեր/դուստրի, սգո/սգի, տիկնանց/տիկինների, անձանցից/անձերից, աստծո/աստծու, Կիլիկիո/Կիլիկիայի, Վանա/Վանի նն), մեկը գրական է, մյուսը՝ բարբառային (կաշվի/կաշու, կաշվից/կաշուց, սկետուրի/կետուր, ընկերոջ/ընկերի, քրոջ/քվոր, Լոռի/Լոռու) նն:

Այս զուգաձևերի միջև իմաստային սկզբունքային տարբերություններ չկան: Կան ոճական-արտահայտչական տարբերություններ, որոնք ի հայտ են գալիս խոսքային մակարդակում՝ գործածության մեջ: Օրինակ՝ «Կաթողիկոսը զայրացած էր և ուզում էր նամակ գրել հոռոմների **կայսեր/կայսրին**»: Ընդգծված հոլովաձևերի միջև չկա իմաստային տարբերություն, բայց կա ոճական-արտահայտչական որոշ զանազանություն՝ **կայսեր** ձևը ակնհայտորեն ավելի գրական-գրքային է. որոշ հանդիսավորություն է հաղորդում խոսքին, ստեղծում է պատմական միջավայր: Նույնատիպ օրինակներ են հետևյալները՝ «Ապրի՛ր այնպես, որ արժանանաս **աստծո/աստծու** բարեհաճությանը», «Որովհետև **աստծո/աստծու** կամքը այս է», «Ֆրանսիան առևտրային հարաբերություններ է ունեցել **Կիլիկիայի/Կիլիկիո** հայոց թագավորության հետ», «Հրավիրված **տիկնանց/տիկինների** մի մասը չսպասեց ընթրիքին», «Բարի **լույսի/լուստ** հետ մի աքաղաղ մատաղ կանենք աստծուն», «Փշրվեց **հույսի/հուստ** վերջին նշույլը», «Նախագահի **մամլո/մամուլի** ասուլիսը շատ կարճ տևեց» նն: Եվ հակառակը՝ խոսակցական կամ բարբառային ձևերը խոսքը դարձնում են հասարակ, երբեմն՝ անմիջական ու մտերմիկ՝ «Տատը թրջոց դրեց **թոռի/թոռան** այրվող ճակատին», «Նույն **կաշուց/կաշվից** էր պատրաստված նրա կապարձը», «Ձեր **անունին/անվանը** մեռնեմ, ձեր արևին դուրբան», «Ես երգիչ **հրի**, սրի, շահ չունեմ քո սիրուց գատ...»//«Կրակ թափելով եղջյուրներից **հրո**»:

Հասկանալի է, որ գործառական նշանակությամբ պայմանավորված՝ նշված զուգաձևերի մի մասը ունի նաև զուտ կապակցական դեր, որը ձևավորվել է լեզվի զարգացման նախորդ փուլերում և փոխանցվել է ավանդույթով, ինչպես՝ *Կիլիկիո կաթողիկոսություն/թեմ/առաջնորդարան, Վանա լիճ/տառեխ/ծով/կատու, պատվո պահակ/լեզեռն/շքանշան, խնդրո առարկա, սգո արարողություն/սրահ, Լոռվա ձոր/դաշտ/սարահարթ/բնաշխարհ, Շուշվա աղցան/կոլոլակ, Գյումրվա խաշ/աղաթ/հարսանիք/քյալլա/«շլապկա», տիկնանց տիկին, առավոտ լուստ, ի սեր/փառք/մարդ աստծո, հրո ճարակ* նն:

Լեզվի զարգացման ընթացքում աստիճանաբար ու տևականորեն մշակվում ու հղկվում են կանոններն ու օրինաչափությունները: Դրանց հիմքում լեզվի զարգացման ներքին միտումներն են, որոնք բխում են մտքի արտահայտման միջոցները բարելավելու և զարգացնելու, մարդ-

կային հաղորդակցումը կատարելագործելու անհրաժեշտությունից: Այդ միտումների արգասիք են հոլովման զուգաձևություններում **ի** հոլովման ընդլայնումը, հոլովային և հիմքային զուգաձևերում բառի ուղիղ ձևի և անհնչյունափոխի հիմքերի զարգացումը, իմաստային և ռճական զուգաձևերի ընձեռած գործառական լայն հնարավորությունները. արտասանական էներգիայի տնտեսում, հաղորդակցման սեղմ և մատչելի «ուղիղ» լեզվական ձևերի զարգացում, արագ և ազդեցիկ խոսքի ձևավորում են: Լեզվական զուգաձևությունների առաջացումն ու փոփոխությունները լեզվի բնականոն զարգացման արդյունք են:

ЮРИЙ АВЕТИСЯН – Принципы и виды дифференциации флективных спряжений существительных в современной системе восточно-армянского литературного языка. – В ходе развития языка в звательной системе современного литературного восточно-армянского языка образуются и развиваются новые звательные варианты, порождающие звательные дуализмы. Причинами их возникновения являются масштабы доминирования глагола **ի (u)**, взаимопроникновения традиционно передающихся основ спряжений, лежащие в их основе параллелизма, в частности, развитие нефонетических базовых образований, параллельное употребление форм на смысловой и функционально-стилистической основе. На этом основании классифицируются типы словоизменительных форм: 1. Флективные спряжения по структуре родительного и дательного падежа единственного числа за счет расширения спряжения **ի (u)** (*սյան/սյունի, այգու/այգիի, սկեսրոջ/սկեսուրի, ծննդան/ծննդի*), 2. Спряжения основы с наклонными спряжениями с разными окончаниями (*կղզուց/կղզիից, շարժումը/շարժումով, երջանկությունը/երջանկությունով*), 3. Базовый параллелизм - наклонные перегибы с одинаковым окончанием, но разными базовыми спряжениями. (*մարզի/մարզի, օրից/օրվանից, գրչով/գրչով, օրով/օրվանով, Լոռիում/Լոռում*), 4. Смысловой параллелизм - параллелизм, обусловленный разным значением слова (*օրի/օրվա, տարու/տարիի, ժամից/ժամվանից, զիշերով/զիշերվանով*), 5. Стилистический параллелизм - параллелизм с разными стилистическими и экспрессивными показателями (*սգն/սգի, դասեր/դասարի, Լոռի/Լոռում*). Все это подробно обсуждается и описывается в статье.

Употребление словоизменительных спряжений представляет собой непрерывный грамматический процесс. Эта часть армянской морфологической системы, наряду с системой спряжения глаголов, делает ее, пожалуй, самым богатым разделом армянской грамматики.

Ключевые слова: развитие, флективное, параллельные формы, флективные спряжения, семантический, стилистический, основной, фонетический, нефонетический, диморфный

YURI AVETISYAN – The Principles and Types of Equivalent Forms of Declension in the Noun System of Modern Literary Eastern Armenian. – In the course of the development of the language in the vocative system of modern literary Eastern Armenian, new vocative variants are formed and developed, bringing forth vocative dualities. The reasons for their occurrence are the scope of the dominance of the **ի (i)** case, the interpenetrations of the traditionally transmitted equivalent forms of declension, the underlying declensions, and the development of non-phonetic based formations, and the parallel use of forms on a semantic and functional-stylistic basis. On this basis, the varieties of vocative equivalent forms are classified as follows: 1.

Equivalent forms of declension - according to the composition of the singular genitive case, which is conditioned by the expansion of the **ի (i)** equivalent form (այսն/այունի, այգու/այգիի, սկեսորջ/սկեսորի, ծննդան/ծննդի), 2. Conjugations of equivalent forms - oblique conjugations with different endings (կղզուց/կղզիից, շարժմամբ/շարժումով, երջանկությամբ/երջանկությունով), 3. Basic equivalent forms - oblique inflections with the same ending but with different basic equivalent forms (մարգիչի/մարգչի, օրից/օրվանից, գրչով/գրիչով, օրով/օրվանով, Լոռիում/Լոռում), 4. Semantic equivalent forms – they are conditioned by different meanings of the word (օրի/օրվա, տարու/տարիի, ժամից/ժամվանից, գիշերով/գիշերվանով), 5. Stylistic equivalent forms – they are with different stylistic-expressive meanings (սգո/սգի, դասեր/դուստրի, Լոռվա/Լոռու). Those are thoroughly discussed and described in the article.

The formation and use of case equivalent forms is a continuous grammatical process. This part of the Armenian morphological system, parallel with the verb conjugation system, probably makes it the richest field of the Armenian grammar.

Key words: *development, inflectional, equivalent forms, equivalent forms of declension, semantic, stylistic, basic, phonetic, non-phonetic, dimorphic*